ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 2 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Գևորգ Ղարիբյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գևորգ Ղարիբյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի մարտի 14-ին)՝ խնդրելով.

«ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ... 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին և 3-րդ մասին տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր, բացահայտելով դրանց՝ սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Ըստ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իր նկատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 3-րդ մասի կիրառման հետևանքով ինքը զրկվել է արդար դատաքննության իրավունքից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով օրենսդիրը չի սահմանել վճռաբեկ բողոքը կրկնակի ներկայացնելու դեպքում այն կրկին անգամ դատավարության մասնակիցներին ուղարկելու որևէ կարգ, հետևաբար՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 3-րդ մասի պահանջներին տրվել է յուրովի և օրենքից չբխող մեկնաբանություն:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրման արդյունքներից՝ Գևորգ Ղարիբյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

բաձրացնելով **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 3-րդ մասի** հակասահմանադրականության հարցը՝ դիմողն իրականում չի ներկայացնում խնդրո առարկա դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու որևէ հիմնավորում: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների

ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Բացի դրանից, դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Հետևաբար, վերոնշյալ դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գևորգ Ղարիբյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

2 ապրիլի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-13